**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

**N 03/26/13110-2026**

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՊԱՐՈՆ
ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Մկրտչյան,

Ի պատասխան Ձեր սույն թվականի մայիսի 12-ի գրության՝ հայտնում ենք հետևյալը.

«Գնումների մասին» օրենքի

- 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել,
- 7-րդ մասի համաձայն՝ պատվիրատուն պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում:

Վերոգրյալի ամփոփմամբ հայտնում ենք, որ եթե գնման համար ամբողջությամբ նախատեսված է ֆինանսական միջոցներ, ապա այն չի կարող իրականացվել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Ստորագրող
ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ
2003930574

2026-05-25 18:42:18 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Կատարող՝ Արևիկ Մանուկյան հեռ. 011800258
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Մելիք-Ադամյան փող. 1, հեռ. (+374 11) 800002, www.minfin.am